

Հեռ 091 06 90 39

Մակերես՝ 12.1կմ²

Բնակչություն՝ 1001

hatsik.shirak@mta.gov.am

Համայնք Գյումրու տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 5-6կմ հեռավորության վրա:
Համայնքի վարչական տարածքի մեջ մտնում են Հացիկ և Մայիսյան կայարանի գյուղը: Տեղադրված է Վանաձոր-Գյումրի երկաթուղու վրա:

Նախկինում Հացիկ գյուղն ունեցել է Թափաղի, Թեփերլի, Թոփառ, Թոփաղու, Թոփարլու անվանումները: Հացիկ է վերանվանվել 1949 թ-ին: Մայիսյան կայարանի գյուղը հիմնադրվել է որպես երկաթուղային կայարանին կից ավան: Կայարանը կառուցվել է 1898 թ-ին:

Գյուղը տեղադրված է Շիրակի մեղմաթեք դաշտում՝ ծովի մակարդակից 1650մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Ունի սև տուֆի և ածխի պաշարներ:

Գյուղում եղել են զգալի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:

Շրջակայքում կան հին եկեղեցի և գերեզմանոց, իսկ Հացիկ գյուղից 1կմ հյուսիս-արևելք գտնվում է գյուղատեղի և սրբավայր:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Բասենի, Մուշի շրջաններից, Կարսի մարզից 1829-1830թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 327, 1897 թ-ին՝ 864, 1926 թ-ին՝ 888, 1939 թ-ին՝ 1068, 1959 թ-ին՝ 879, 1970 թ-ին՝ 894, 1979 թ-ին՝ 820 հայ բնակիչ: 2013 թ-ի հունվարի 1-ի տվյալներով Հացիկն ունեցել է 1001, Մայիսյան կայարանի գյուղը՝ 63 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2005 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 1144 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 48%, կանայք՝ 52%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 19%:

Ունի 538 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, մշակույթի տուն, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 510հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 145 և 251 հեկտար:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Նախկինում զբաղվել են շաքարի ճակնդեղի մշակությամբ, որոնք վերամշակվել է Սպիտակի շաքարի գործարանում:

Երկրաշարժի արդյունքում գործարանը հիմնովին ավերվել է և շաքարի ճակնդեղի ցանքերի մակերեսները զգալի կրճատվել են: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը: